ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍՄԲԱՏ
Եվրասիա միջազգային համալսարանի Իրավագիտության,
քաղաքագիտության, միջազգային հարաբերությունների ամբիոնի հայցորդ
ՀՀ Փաստաբանների պալատի անդամ

DOI: 10.63925/18294847-2026.blj22-07

Ամփոփագիր: Սույն գիտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել իրավական որոշակիության սկզբունքի բովանդակությունը, դրա տեսական հիմքերը և գործնական դրսևորումները՝ որպես իրավական պետության և իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքներից մեկի: Հետազոտությունն ուղղված է իրավական որոշակիության սկզբունքի ձևավորման, զարգացման և արդի նշանակության բացահայտմանը՝ եվրոպական և միջազգային դատական պրակտիկայի համատեքստում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական-իրավական, ձևաբանական (դոգմատիկ), համակարգային, պատմաիրավական և նախադեպային իրավունքի վերլուծության մեթոդները: Ուսումնասիրվել են Եվրոպական միության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, ինչպես նաև իրավական դոկտրինայում ձևավորված մոտեցումները:

Հետազոտության արդյունքում հիմնավորվում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ներառում է իրավական նորմերի հստակության, հասանելիության, կանխատեսելիության և կայունության պահանջները, որոնք հնարավորություն են տալիս իրավունքի սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները և արդյունավետորեն իրացնել իրենց իրավունքները: Վերլուծության հիման վրա բացահայտվում է, որ իրավական որոշակիության կարևոր բաղադրիչներն են դատական ակտերի վերջնականության (**res judicata**) սկզբունքը, իրավաչափ ակնկալիքների (**legitimate expectations**) պաշտպանությունը, իրավական նորմերի հետադարձ ուժի սահմանափակումը և պետական մարմինների հայեցողական

լիազորությունների իրավաչափ սահմանները: Այդ մոտեցումները ձևավորվել և զարգացվել են Եվրոպական միության դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, մասնավորապես՝ *Commission v. Italy*, *The Sunday Times v. the United Kingdom (No. 1)*, *Malone v. the United Kingdom*, *Busuioc v. Moldova*, *Brumărescu v. Romania* և *Ponomaryov v. Ukraine* գործերով:

Հետազոտության արդյունքում եզրակացվում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ժամանակակից սահմանադրական ժողովրդավարության և իրավական պետության անբաժանելի տարրերից է: Այն դրսևորվում է ինչպես իրավական նորմերի բովանդակության և որակի, այնպես էլ դրանց մեկնաբանության և կիրառման գործընթացում՝ ապահովելով իրավական հարաբերությունների կայունությունը, հանրային վստահությունը, իրավական անվտանգությունը և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Բանալի բառեր: Իրավական որոշակիություն, իրավունքի գերակայություն, «օրենքով սահմանված» չափանիշ, կանխատեսելիություն, res judicata, իրավաչափ ակնկալիքներ, դատական պրակտիկա, Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Ներածություն

Ժամանակակից իրավական պետության պայմաններում իրավական որոշակիության սկզբունքն իրավունքի գերակայության հիմնարար բաղադրիչներից մեկն է: Իրավական համակարգի արդյունավետությունը և հասարակության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ մեծապես կախված են նրանից, թե որքանով են իրավական նորմերը հստակ, հասանելի և կանխատեսելի: Իրավական որոշակիությունն ապահովում է, որ իրավունքի սուբյեկտները կարողանան ճիշտ ընկալել իրենց իրավունքներն ու պարտականությունները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել գործող իրավակարգավորմանը:

Այս սկզբունքը ձևավորվել է եվրոպական իրավական մտածողության շրջանակներում և հետագայում դարձել է միջազգային և ներպետական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը: Այն ընդգրկում է ոչ միայն իրավական նորմերի ձևակերպման հստակությունը, այլ նաև դրանց կիրառման միատեսակությունը և իրավական հարաբերությունների կայունությունը: Իրավական որոշակիությունը

պահանջում է, որ օրենքները լինեն հասկանալի և կանխատեսելի, իսկ դրանց կիրառումը՝ զերծ կամայականությունից:

Հատկապես կարևոր է իրավական որոշակիության դերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Իրավական նորմերի հստակությունն ու կանխատեսելիությունն այն հիմնական նախապայմաններն են, որոնք ապահովում են անձի հիմնարար իրավունքների արդյունավետ իրականացումը: Այս համատեքստում «օրենքով սահմանված լինելու» պահանջը ենթադրում է, որ ցանկացած իրավական սահմանափակում պետք է հիմնված լինի բավարար հստակությամբ ձևակերպված և հանրությանը հասանելի նորմերի վրա:

Իրավական որոշակիության կարևոր բաղադրիչներից է նաև դատական ակտերի վերջնականության սկզբունքը, որը երաշխավորում է իրավական հարաբերությունների կայունությունը և կանխում է նույն հարցերի անվերջ վերանայումը: Վերջնական դատական ակտերի կայունությունը նպաստում է արդար դատաքննության ապահովմանը և բարձրացնում է վստահությունը դատական համակարգի նկատմամբ:

Բացի այդ, իրավական որոշակիությունը ներառում է պետական մարմինների հայեցողական լիազորությունների սահմանափակումը: Թեև իրավական կարգավորումը չի կարող ամբողջությամբ բացառել հայեցողության տարրը, այն պետք է սահմանվի հստակ շրջանակներում, որպեսզի կանխվի կամայական միջամտությունը և ապահովվի անձանց իրավունքների պաշտպանությունը:

Սկզբունքի կարևոր տարր է նաև իրավաչափ ակնկալիքների պաշտպանությունը, որը թույլ է տալիս անձանց ապավինել գործող իրավական կարգավորմանը և ունենալ վստահություն դրա կայունության նկատմամբ: Այս հանգամանքը հատկապես կարևոր է իրավական նորմերի փոփոխության կամ հետադարձ ուժի կիրառման դեպքերում:

Միևնույն ժամանակ, իրավական որոշակիությունը չի կարող դիտարկվել որպես բացարձակ արժեք: Իրավական նորմերը պետք է ունենան նաև հասարակական հարաբերությունների փոփոխությանը հարմարվելու որոշակի ճկունություն: Հետևաբար, իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության հիմնական խնդիրներից է հավասարակշռություն ապահովել հստակության և ճկունության միջև:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ իրավական որոշակիության սկզբունքն իրավական պետության հիմքն է, որն ապահովում է իրավական հարաբերությունների կայունությունը, կանխատեսելիությունը և արդարությունը: Այն կարևոր դեր է խաղում մարդու իրավունքների պաշտպանության, պետական իշխանության սահմանափակման և հանրային վստահության ձևավորման գործում:

Հիմնական հետազոտություն

Իրավական որոշակիության սկզբունքի արդիականության մասին խոսելիս կարելի է նշել երկու հիմնական կետ. իրավական հարաբերությունների կայունության ապահովումն ու ժողովրդավարության պահպանումը: Դա պայմանավորված է նրանով, որ որոշակիությունն ապահովում է արդեն կայացված որոշումների պաշտպանությունը: Որոշակիությունը՝ որպես սկզբունք, առաջին անգամ հիշատակվել է Եվրոպական համայնքների դատարանի կողմից 1960 թվականին՝ որպես իրավունքի նորմ, որը պետք է պահպանվի պայմանագրի կիրառման ժամանակ:

Commission v Italy (1961) ECR 317, գործ 7/61վճռում Դատարանն ընդգծեց, որ Համայնքային իրավունքի կիրառումը պետք է համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին: Դատարանը, ըստ էության, նշել է, որ «իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ իրավական նորմերը լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի անձինք կարողանան միանշանակորեն պարզել իրենց իրավունքներն ու պարտականությունները և գործեն դրանց համապատասխան»:[1]

Այլ կերպ ասած՝ Պայմանագրի դրույթների կիրառման ընթացքում թե՛ անդամ պետությունները, թե՛ Համայնքային (ներկայում՝ Միության) ինստիտուտները պարտավոր են ապահովել, որ իրավական նորմերը լինեն կանխատեսելի, թափանցիկ և բավարար չափով հստակ, որպեսզի իրավունքի սուբյեկտները կարողանան գիտակցել իրենց իրավական վիճակը: Այսպիսով՝ իրավական որոշակիությունը ձևավորվեց որպես Եվրոպական (այժմ՝ Միության) իրավունքի ընդհանուր սկզբունքներից մեկը:

[1]Տե՛սCourt of Justice of the European Communities. (1961). *Commission of the European Economic Community v Italy* (Case 7/61), ECR 317

Հետագայում այն բազմիցս կիրառվել է ինչպես ներպետական դատարաններում, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումների շրջանակում իրավական որոշակիության սկզբունքի հիմնական շեշտադրումները կարելի է համակարգել հետևյալ ուղղություններով.

1. «Օրենքով սահմանված լինելու» չափանիշը

Դատարանը հետևողականորեն մեկնաբանել է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ցանկացած սահմանափակում պետք է լինի «օրենքով սահմանված»: Այս պահանջը չի սպառվում իրավական նորմի ձևական գոյությամբ. այն ենթադրում է, որ իրավական կարգավորումը պետք է լինի՝ հասանելի (accessible), բավարար աստիճանի հստակ և կանխատեսելի (foreseeable) և երաշխավորի պաշտպանություն կամայական միջամտությունից: Այս մոտեցումը հստակ ձևակերպվել է, մասնավորապես, The Sunday Times v. the United Kingdom (No. 1) գործով (1979 թ.), որտեղ Դատարանը նշել է, որ իրավական նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի ճշգրտությամբ, որ անձը կարողանա ողջամիտ չափով կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները:[2]

2. Դատական ակտերի վերջնականության սկզբունքը (res judicata)

Իրավական որոշակիության բաղկացուցիչ տարրերից է դատական ակտերի վերջնականության և կայունության ապահովումը: Դատարանն ընդգծել է, որ ուժի մեջ մտած և վերջնական դատական ակտերի կամայական վերանայումը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին և իրավունքի գերակայության գաղափարին: Այս սկզբունքը զարգացվել է, մասնավորապես, Brumărescu v. Romania գործով (1999 թ.):[3]

3. Կանխատեսելիություն և կամայականության սահմանափակում

[2]Տե՛ս European Court of Human Rights. (1979). *The Sunday Times v. the United Kingdom (No. 1)* (Application no. 6538/74), Judgment of 26 April 1979, Series A no. 30.
[3]Տե՛ս European Court of Human Rights. (1999). *Brumărescu v. Romania* (Application no. 28342/95), Judgment of 28 October 1999, Reports of Judgments and Decisions 1999-VII.

Դատարանի իրավական մեկնաբանությամբ՝ իրավական որոշակիությունը սերտորեն փոխկապակցված է իրավունքի գերակայության սկզբունքի հետ: Պետական մարմիններին վերապահված հայեցողությունը պետք է ունենա հստակ սահմաններ, իսկ իրավական նորմերը չպետք է կիրառվեն կամայական կամ անկանխատեսելի կերպով:[4] Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս արձանագրել է, որ European Convention on Human Rights-ի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի Նախաբանի լույսի ներքո, որը հղում է կատարում իրավունքի գերակայության սկզբունքին: Այս մոտեցումը ձևակերպվել է, մասնավորապես, Golder v. the United Kingdom գործով, որտեղ Դատարանը շեշտել է, որ Կոնվենցիայի դրույթների մեկնաբանումը պետք է իրականացվի դրանց նպատակի և համակարգային ամբողջության համատեքստում: Այս իրավական մոտեցումը զարգացնելով՝ ՄԻԵԴ-ը, քննարկելով այն հարցը, թե արդյոք դատարաններին կամ պետական մարմիններին լայն հայեցողություն տրամադրող նորմերը բավարար որոշակիություն են պարունակում, արձանագրել է, որ իրավական որոշակիության պահանջը չի բացառում հայեցողական լիազորությունների առկայությունը: Սակայն նման լիազորությունների ծավալը և դրանց իրականացման եղանակը պետք է սահմանված լինեն բավարար հստակությամբ՝ հաշվի առնելով տվյալ գործով հետապնդվող օրինական նպատակները, որպեսզի անձը պաշտպանված լինի կամայական միջամտությունից: Այս սկզբունքը հստակ ձևակերպվել է, օրինակ, Malone v. the United Kingdom գործով (1984 թ.), որտեղ Դատարանը նշել է, որ օրենքը պետք է սահմանափակի իշխանության հայեցողությունը և ապահովի կամայականության դեմ արդյունավետ երաշխիքներ:[5]

Միաժամանակ, իրավական որոշակիության սկզբունքի կարևոր բաղադրիչ է res judicata-ի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի անբեկանելիության սկզբունքը: Դատարանը մի շարք վճիռներում այս սկզբունքը դիտարկել է որպես իրավական որոշակիության և իրավունքի գերակայության դրսևորում: Մասնավորապես,

[4]Տե՛ս European Court of Human Rights. (1984). Malone v. the United Kingdom *(Application no. 8691/79), Judgment of 2 August 1984, Series A no. 82.*

[5]Տե՛ս Malone v. The United Kingdom, 2 օգոստոսի 1984 թ., գործ N° 8991/79, § 66, Margareta and Roger Andersson v. Sweden, 25 փետրվարի 1992 թ., գործ N° 12963/87, § 75, Tolstoy Miloslavsky v. the United Kingdom, 13 հուլիսի 1995 թ., գործ N° 18139/91, § 37):

Ponomaryov v. Ukraine գործով (2008 թ.) Դատարանը վերահաստատել է, որ կողմերից ոչ մեկը իրավունք չունի պահանջելու վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշման վերանայում միայն այն նպատակով, որ գործը նորից քննվի և կայացվի այլ որոշում:[6]

Նշենք նաև, որ ՄԻԵԴ-ը «իրավական որոշակիությունը» ևս համարում է օրինականության սկզբունքի (rule of law) էական բաղադրիչներից մեկը: Կարևորում է, որ վերջին ատյանի վճիռները վերջնական լինեն՝ առանց դրանց չորրորդ ուժով վերանայման (res judicata): Այս դիրքորոշումը տվել է ՄԻԵԴ-ը, օրինակ՝ Բրումայեսկին ընդդեմ Ռումինիայի որոշման միջոցով[7], ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի որոշմամբ:

Մասնավորապես, Բրումայեսկին ընդդեմ Ռումինիայի գործով դատարանը պնդել է, որ վերջնական վճիռը չպետք է ստորադաս ատյաններով կամ ոչ ժողովրդավարական ձևով հնարավոր լինի փոխել, այլ՝ միայն բացառիկ և հիմնավոր պատճառներով (judicial error և այլն), այլ վերանայումը թույլատրվում է միայն «substantial and compelling character» հիմք ունենալու դեպքում, ինչպես սահմանված էր Ռյաբիկն ընդդեմ Ռուսաստանի կամ Մորերիա Ֆերարին ընդդեմ Պորտուգալիայի (no. 2) գործերում:[8]

Հետաքրքրական է նաև Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, որով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայում օգտագործված՝ «օրենքով նախատեսված» տերմինը ենթադրում է նաև այնպիսի իրավական սկզբունքների պահպանություն, ինչպիսին է որոշակիության և իրավական որոշակիության սկզբունքը: ՄԻԵԴ-ն նշում է, որ «օրենքով նախատեսված» հասկացությունը վերաբերում է ոչ միայն գրավոր օրենքներին կամ գրավոր իրավական կանոններին, այլև բանավոր օրենքին, այսինքն՝ հասարակության հաստատված կանոններին և բարոյական սկզբունքներին: Այս կանոնները, որոնք ապահովում են իրավական կարգի կայունությունը, ներառում են նաև դատական պրակտիկան: Կոնվենցիան պահանջում է, որ օրենքը (լինի գրավոր, թե բանավոր) լինի բավական

[6]Տե՛ս European Court of Human Rights. (2008). *Ponomaryov v. Ukraine* (Application no. 3236/03), Judgment of 3 April 2008.
[7]Տե՛ս European Court of Human Rights. (1999). *Brumărescu v. Romania*, no. 28342/95.
[8] Տե՛ս European Court of Human Rights. (2003). *Ryabykh v. Russia*, no. 52854/99.

հստակ, որպեսզի քաղաքացին կարիք առաջանալու դեպքում որոշակի չափով, որոշակի պայմաններում կարողանա կանխատեսել իր գործողության հնարավոր հետևանքները: ՄԻԵԴ-ը նման դիրքորոշում է արտահայտել նաև «Սթիլը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով:[9]

2004 թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) վճռում մասնավորապես Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է: Միաժամանակ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարտությանն առնչվող օրենքները՝ պատվի և արժանապատվության իրենց շեշտադրմամբ, անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան: Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները: Գնահատողական դատողությունների և փաստերի տարանջատման անհրաժեշտության առնչությամբ Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առաջադրել է այն պահանջը, որ հստակ տարբերակում պետք է կատարել փաստական տվյալների և գնահատողական դատողությունների միջև:

Նույնաբովանդակ որոշումներ են առկա նաև Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի, Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի, Դամման ընդդեմ Շվեյցարիայի գործերով, որով ՄԻԵԴ-ն պահանջել է, որ օրենքները լինեն այնպիսի հստակությամբ, որ անհատները

[9]Տե՛ս Steel and others v. The United Kingdom

կարողանան կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները. սա որոշակիության առանցքներից մեկն է: Շատ հետաքրքրական է նաև ՄԻԵԴ-ի դիրքորոշումը Եվրոպական միության իրավունքում, պայմանագրային պրակտիկայում և օրենսդրությունում որոշակիության սկզբունքի վերաբերյալ:

Թեև Եվրոպական միության հիմք հանդիսացող պայմանագրերն ուղղակիորեն չեն ամրագրում իրավական որոշակիության սկզբունքը, սակայն ՄԻԵԴ-ը այն ճանաչում է որպես եվրոպական իրավունքի ընդհանուր սկզբունքներից մեկը: Salumi գործով, Դատարանը շեշտեց, որ ԵՄ իրավունքի ազդեցությունը (հետևանքները) պետք է լինեն պարզ և կանխատեսելի այն անձանց համար, որոնց վրա այն տարածվում է:

Դատարանը նաև հղում է կատարել իր ավելի վաղ՝ Ռաքեն ընդդեմ Մայնցի Հաուպցոլցլամտի (1979 թ.), և Լանդաուի Հաուպցոլցլամտ (1979 թ.) գործերին, որտեղ բազմիցս ընդգծվել է իրավական որոշակիության և իրավաչափ ակնկալիքների սկզբունքների կարևորությունը, և նշվել է հետևյալը. «Իրավական որոշակիության սկզբունքը նպատակ ունի կանխել այն իրավիճակները, երբ ԵՄ իրավական ակտերի դրույթները հետադարձ ուժ ունեն իրենց հրապարակման պահին, և այդպիսի հնարավորությունը կարող է արդարացված լինել միայն՝ նպաստելով համապատասխան օրենսդրության նպատակներին և պահպանելով տվյալ նորմերի հասցեատերերի իրավաչափ ակնկալիքները»:[10]

Ըստ ՄԻԵԴ միասնական դատական պրակտիկայի ուսումնասիրության՝ պարզ է դառնում, որ որոշակիությունը պետք է հասկացվի հետևյալ բաղադրիչների միջոցով.

- օրենքի պարզություն, հստակություն և միանշանակություն,
- անձի՝ իր գործողություններում հիմնավորված և կանխատեսելի ակնկալիքների վրա հենվելու իրավունք,
- գործող օրենսդրության կայունության նկատմամբ ողջամիտ վստահություն,
- ինչպես նաև՝ օրենքի կիրառման հետևանքները կանխատեսելու հնարավորությունը (*legitimate expectations*, այսինքն՝ իրավաչափ ակնկալիքներ):

ՄԻԵԴ-ն կարևորում է նաև ոչ միայն օրինաչափության մեջ հստակությունը, այլ նաև հստակ և համակողմյա դատական պրակտիկայի առկայության դեպքում: Այսպես, Բալաժոսկին ընդդեմ Մակեդոնիայի՝ Նախկին Յուգոսլավական Հանրապետության

[10] Տե՛ս Racke v. Hauptzollamt Mainz and Hauptzollamt Landau

(2004 թ.), Էմել Բոյրազն ընդդեմ Թուրքիայի (2005 թ.) գործերում ՄԻԵԴ-ը նշել է, որ հակասական վճիռների գոյությունն առանց համապատասխան արձագանքման կարող է խախտել արդար դատաքննության և հետևաբար՝ որոշակիության սկզբունքը՝ նշելով, որ «…Նմանատիպ գործերում հակասող վճիռները՝ համաչափություն ապահովող մեխանիզմի բացակայության պայմաններում, խախտում են արդար դատաքննության սկզբունքը և պղտորում հանրային վստահությունը (դատական համակարգի նկատմամբ)»:

Որոշակիության սահմանադրական սկզբունքը ենթադրում է, որ օրենսդիրը պետք է ձգտի իրավական ակտերի ձևակերպման հստակության և պարզության: Յուրաքանչյուր անձ, կախված կոնկրետ հանգամանքներից, պետք է կարողանա կողմնորոշվել, թե որ իրավական նորմն է կիրառվում տվյալ դեպքում, և ունենալ հստակ պատկերացում այն իրավական հետևանքների վերաբերյալ, որոնք առաջանալու են տվյալ իրավահարաբերությունում. խոսքը վերաբերում է օրենքի ողջամիտ և կանխատեսելի կայունությանը: Ի դեպ, մեր հենց այս դիրքորոշումն ամրագրված է նաև Ուկրաինայի Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 20-ի թիվ 6-r/2019 որոշման հիմնավորման բաժնի 4-րդ կետի ենթակետի 4.1-ի 4-6-րդ պարբերություններում:[11]

Հետևաբար, վերոգրյալի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մշտական դատավճիռներից և իրավաբանական վերլուծությունից հետևում է, որ ՄԻԵԴ-ն որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես սահմանադրական կարգի և իրավական պետության անբաժանելի տարր, որը հստակ արտահայտվում է ինչպես իրավական ակտերի բովանդակության, այնպես էլ դրանց կիրառման պրակտիկայում:

Սահմանադրական մակարդակում որոշակիության սկզբունքի արտահայտման հիմնական առանցքները, ըստ ՄԻԵԴ-ի, հետևյալն են.

ՄԻԵԴ-ն նշում է, որ սահմանադրական նորմերը, որոնք կարգավորում են մարդու հիմնարար իրավունքները և պետական սահմանափակումները, պետք է լինեն հասկանալի, հստակ և կանխատեսելի: Այլ կերպ՝ անհատը պետք է կարողանա իր

[11] Տե՛ս Constitutional Court of Ukraine of June 20, 2019 № 6-r/2019

վարքը համաձայնեցնել օրենքին՝ առանց ենթարկվելու կամայական մեկնաբանությունների:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ որոշակիության սահմանադրական սկզբունքն իրավական պետության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության հիմնաքարն է: Այն պահանջում է, որ սահմանադրական նորմերը և դրանց կիրառումը լինեն հստակ, կանխատեսելի և կայուն՝ բացառելով կամայականությունը և ապահովելով հանրային վստահությունը դատական և պետական ինստիտուտների նկատմամբ: Այս սկզբունքը տարածվում է ոչ միայն օրենսդրական մակարդակում ընդունվող նորմերի վրա, այլ նաև՝ դատական պրակտիկայի և սահմանադրական վերահսկողության ամբողջ համակարգի վրա:

Եզրակացություն

Տեսական եզրահանգումներ

Սույն հետազոտության շրջանակում իրականացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավական որոշակիության սկզբունքը ժամանակակից իրավական պետության և իրավունքի գերակայության հիմնարար ու համակարգաստեղծ սկզբունքներից է: Այն հանդես է գալիս ոչ միայն որպես իրավական նորմերի ձևական որակի պահանջ, այլև որպես ամբողջ իրավական համակարգի կայունությունն ու կանխատեսելիությունն ապահովող համընդհանուր սկզբունք:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ իրավական որոշակիությունը բազմաբաղադրիչ իրավական կատեգորիա է, որը ներառում է իրավական նորմերի հասանելիության, հստակության, կանխատեսելիության, իրավակիրառ պրակտիկայի հետևողականության, դատական ակտերի վերջնականության (*res judicata*) և իրավաչափ ակնկալիքների պաշտպանության պահանջները: Նշված բաղադրիչները փոխկապակցված համակարգ են և միասին ապահովում են իրավական անվտանգության և իրավական կայունության անհրաժեշտ մակարդակը:

Տեսական վերլուծությունը նաև հիմնավորում է, որ իրավական որոշակիությունը չի կարող դիտարկվել մեկուսացված, այլ պետք է ընկալվի իրավունքի գերակայության և իրավական պետության սկզբունքների համատեքստում: Միաժամանակ հաստատվում է, որ իրավական որոշակիության և իրավական ճկունության միջև առկա

է բնական փոխհարաբերություն, որի պահպանվող հավասարակշռությունն անհրաժեշտ պայման է իրավական համակարգի արդյունավետ զարգացման համար:

Կիրառական եզրահանգումներ

Կիրառական տեսանկյունից հետազոտությունը ցույց է տալիս, որ իրավական որոշակիության սկզբունքի արդյունավետ իրագործումը մեծապես պայմանավորված է օրենսդրական տեխնիկայի որակով, իրավական նորմերի ձևակերպումների ճշգրտությամբ և դատական պրակտիկայի հետևողականությամբ: Իրավական նորմերի անորոշությունը կամ հակասական մեկնաբանությունը կարող է հանգեցնել իրավակիրառ գործունեության կամայականության, խաթարել իրավական կանխատեսելիությունը և նվազեցնել հանրային վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ:

Եվրոպական միության դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ազգային սահմանադրական դատարանների նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ իրավական որոշակիությունը գործնականում ապահովվում է օրենքի որակի, իրավաչափ ակնկալիքների պաշտպանության, դատական ակտերի կայունության և պետական մարմինների հայեցողական լիազորությունների արդյունավետ սահմանափակման միջոցով: Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքը ոչ միայն տեսական իրավական կատեգորիա է, այլև իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության արդյունավետության գնահատման գործնական չափանիշ:

Առաջարկություններ

Հետազոտության արդյունքների հիման վրա նպատակահարմար է ձևակերպել հետևյալ առաջարկությունները.

1. Օրենսդրական տեխնիկայի կատարելագործում և իրավական նորմերի հստակեցում

Անհրաժեշտ է կատարելագործել իրավական ակտերի մշակման և ընդունման գործընթացը՝ ապահովելով իրավական նորմերի առավել բարձր մակարդակի հստակություն, միանշանակություն և համակարգվածություն: Այդ նպատակով նպատակահարմար է օրենսդրական գործընթացում ներդնել պարտադիր իրավատեխնիկական և լեզվաիրավական փորձաքննության արդյունավետ

մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան դեռևս նախագծման փուլում բացահայտել և վերացնել իրավական անորոշություններն ու ներքին հակասությունները:

2. Դատական պրակտիկայի միատեսակության ինստիտուցիոնալ ամրապնդում

Իրավական որոշակիության արդյունավետ ապահովման նպատակով անհրաժեշտ է զարգացնել դատական պրակտիկայի միասնականության երաշխավորման ինստիտուցիոնալ մեխանիզմները: Այդ համատեքստում կարևոր է բարձրագույն դատական ատյանների, մասնավորապես՝ սահմանադրական և վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների ուղղորդող նշանակության ամրապնդումը, ինչպես նաև ստորադաս դատարանների կողմից դրանց հետևողական հաշվառման և կիրառման արդյունավետ ընթացակարգերի կատարելագործումը:

Այս առաջարկությունների իրականացումը կնպաստի իրավական որոշակիության սկզբունքի առավել ամբողջական իրագործմանը, իրավական անվտանգության ամրապնդմանը, իրավունքի գերակայության արդյունավետ ապահովմանը և հանրային վստահության բարձրացմանը պետական իշխանության և արդարադատության համակարգի նկատմամբ:

LEGAL APPROACHES OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS TO THE PRINCIPLES OF LEGAL CERTAINTY

MINASYAN SMBAT
Applicant at the Chair of Law, Political Science and International Relations,
Eurasia International University,
Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia

Abstract. This scholarly article is devoted to a comprehensive analysis of the principle of legal certainty as a fundamental component of the rule of law and constitutional statehood. The research examines the formation of this principle within European Union law, beginning with the *Commission v Italy* case, as well as its subsequent development in the case-law of the European Court of Human Rights.

The study demonstrates that legal certainty presupposes clarity, accessibility, and foreseeability of legal norms, enabling individuals to understand their rights and obligations and to anticipate legal consequences. These standards have been elaborated in key judicial practice, particularly in cases such as *The Sunday Times v. the United Kingdom (No. 1), Malone v. the United Kingdom*, and *Busuioc v. Moldova*.

Special attention is given to the principle of the finality of judicial decisions (res judicata), which serves as a guarantee of legal stability and the right to a fair trial. This aspect has been significantly developed in cases such as *Brumărescu v. Romania* and *Ponomaryov v. Ukraine*.

The article also addresses the doctrine of legitimate expectations, limitations on the retroactive effect of legal norms, and the scope of discretionary powers of public authorities, emphasizing that such powers must be exercised within clearly defined legal frameworks to prevent arbitrariness.

The study concludes that the principle of legal certainty constitutes an integral element of the constitutional order of states. It manifests itself both in the content of legal norms and in their practical application, ensuring the stability of legal relations, public trust, and the effective protection of human rights, thereby serving as a cornerstone of modern democratic governance.

Key words: legal certainty, rule of law, “prescribed by law” requirement, foreseeability, res judicata, legitimate expectations, judicial practice, European Court of Human Rights.

ПРАВОВЫЕ ПОДХОДЫ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА К ПРИНЦИПУ ПРАВОВОЙ ОПРЕДЕЛЁННОСТИ

МИНАСЯН СМБАТ
Соискатель кафедры права, политологии и международных
отношений Евразийского международного университета
Член Палаты адвокатов Республики Армения

Аннотация. Целью настоящей научной работы является изучение содержания принципа правовой определенности, его теоретических основ и практических проявлений как одного из основополагающих принципов правового государства и верховенства права. Исследование направлено на выявление формирования, развития и актуального значения принципа правовой определенности в контексте европейской и международной судебной практики.

В ходе исследования использовались сравнительно-правовые, морфологические (догматические), системные, историко-правовые и методы анализа прецедентного права. Было изучено прецедентное право суда Европейского союза и Европейского суда по правам человека, а также подходы, сформулированные в правовой доктрине.

В результате исследования подтверждается, что принцип правовой определенности включает требования ясности, доступности, предсказуемости и стабильности правовых норм, которые позволяют субъектам права предвидеть правовые последствия своего поведения и эффективно реализовывать свои права. На основе анализа выявлено, что важными компонентами правовой определенности являются принцип окончательности судебных актов (res judicata), защита законных ожиданий (legitimate expectations, ограничение обратной силы правовых норм и законные пределы дискреционных полномочий государственных органов. Эти подходы были сформированы и развиты в прецедентном праве суда Европейского союза и Европейского суда по правам человека, в частности в деле Commission V. Италия, The Sunday Times v. Соединенное Королевство (нет. 1), Мэлоун В. Соединенное Королевство, штат Вирджиния. Молдова, Брумэреску В. Румыния и Пономарев В. По делам Украины.

В результате исследования делается вывод о том, что принцип правовой определенности является одним из неотъемлемых элементов современной конституционной демократии и правового государства. Это проявляется как в содержании и качестве правовых норм, так и в их толковании и применении, обеспечивая стабильность правовых отношений, общественное доверие, правовую безопасность и эффективную защиту прав человека.

Ключевые слова: правовая определённость, верховенство права, требование «предусмотренности законом», предсказуемость, resjudicata, законные ожидания, судебная практика, Европейский суд по правам человека.

Օգտագործված գրականության ցանկ

1. Constitutional Court of Ukraine. (2019). Decision No. 6-r/2019 of 20 June 2019.
2. Court of Justice of the European Communities. (1961). Commission of the European Economic Community v. Italy (Case 7/61), *European Court Reports*, p. 317.
3. Court of Justice of the European Communities. (1979). Racke v. Hauptzollamt Mainz (Case 98/78), *European Court Reports*, p. 69.
4. European Court of Human Rights. (1979). The Sunday Times v. the United Kingdom (No. 1) (Application no. 6538/74), Judgment of 26 April 1979, *Series A*, No. 30.
5. European Court of Human Rights. (1984). Malone v. the United Kingdom (Application no. 8691/79), Judgment of 2 August 1984, *Series A*, No. 82.
6. European Court of Human Rights. (1992). Margareta and Roger Andersson v. Sweden (Application no. 12963/87), Judgment of 25 February 1992, *Series A*, No. 226-A.
7. European Court of Human Rights. (1995). Tolstoy Miloslavsky v. the United Kingdom (Application no. 18139/91), Judgment of 13 July 1995, *Series A*, No. 316-B.
8. European Court of Human Rights. (1998). Steel and Others v. the United Kingdom (Application nos. 24838/94, 24919/94, 24924/94, 24934/94, 24940/94, 24943/94, 24944/94, 24952/94 and 24827/94), Judgment of 23 September 1998, *Reports of Judgments and Decisions 1998-VII*.
9. European Court of Human Rights. (1999). Brumărescu v. Romania (Application no. 28342/95), Judgment of 28 October 1999, *Reports of Judgments and Decisions 1999-VII*.
10. European Court of Human Rights. (2003). Ryabykh v. Russia (Application no. 52854/99), Judgment of 24 July 2003, *Reports of Judgments and Decisions 2003-IX*.
11. European Court of Human Rights. (2008). Ponomaryov v. Ukraine (Application no. 3236/03), Judgment of 3 April 2008.